ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 1828–1860 ԹԹ.

Պատմ. գիտ. դոկտոր Ա. Ս. ՀԱՄԲԱՐՅԱՆ

Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին խոշոր իրադարձություն եղավ հայ ժողովրդի համար։ Այդ միացումից հետո երկիրը դուրս եկավ տնտեսական քայքայումից ու լճացումից և բռնեց վերելքի ուղին[1]։ Նրա զարգացմանը նպաստեցին ցարական կառավարության միջոցառումները, որոնք թեպետև հետապնդում էին գաղութարարական նպատակ՝ ձգտում էին ինչպես ամբողջ Անդրկովկասը, այնպես էլ Արևելյան Հայաստանը դարձնել մետրոպոլիայի հումքի բազա և ապրանքների վաճառքի շուկա, այնուամենայնիվ ունեին առաջադիմական մեծ նշանակություն։

1828 թ. Թուրքմենչայի պայմանագրից հետո ռուսական կառավարությունը պաշտոնյաներ ուղարկեց Անդրկովկաս՝ նրա տնտեսական կարողություններն ուսումնասիրելու համար։ Կատարելով հիշյալ հանձնարարությունը, այդ պաշտոնյաները եկան այն եզրակացության, որ երկրամասում կարելի է մշակել ռուսական արդյունաբերության համար պիտանի մի շարք կուլտուրաներ, բայց դրա համար անհրաժեշտ է հիմնել համապատասխան ընկերություններ, անցկացնել ջրանցքներ, արտասահմանից բերել լավորակ սերմեր և այլն[2]։ 1833 թ. կազմակերպվեց «Անդրկովկասի ընկերությունը», որի վրա պարտականություն դրվեց ջրանցքներ կառուցել, յուրացված հողերում զանազան կուլտուրաներ մշակել, դրանց նախնական մշակման համար ձեռնարկություններ հիմնել, առևտրական կապեր հաստատել Անդրկովկասի հարևան երկրների հետ՝ ներմուծելով այնտեղից կայսրության համար օգտակար մթերքներ և այլն։ Սակայն այդ ընկերությունը կապիտալների պակասի պատճառով չկարողացավ լայն գործունեություն ծավալել և 1844 թ. լիկվիդացվեց։ Հետագայում ցարական կառավարությունը ստեղծեց նոր ընկերություններ. 1850 թ. Թիֆլիսում հիմնվեց «Գյուղատնտեսության կովկասյան ընկերու-

---

[1] *Արևելյան Հայաստանի տնտեսական զարգացման հարցերը XIX դարի կեսերին այս կամ այն չափով լուսաբանված են հետևյալ աշխատություններում.* В. А. Рштуни, Крестьянская реформа в Армении в 1870 г., Ереван, 1947; О. Е. Туманян, Экономическое развитие Армении, ч. I, Ереван, 1954; Х. Г. Гуланян, Очерки истории армянской экономической мысли XIX в., М., 1955; М. А. Адонц, Экономическое развитие Восточной Армении, Ереван, 1957; Л. Ханларян, Армянская деревня накануне крестьянской реформы, М., 1954 (диссертация); В. Д. Мочалов, Крестьянское хозяйство Закавказья к концу XIX в., М., 1958; Р. А. Мелик-Саркисян, Проведение в жизнь крестьянской реформы 1870 г. в Армении, Ереван, 1969 (диссертация); *«Հայ ժողովրդի պատմություն», հատ. V, Երևան, 1974։*

[2] *Տե՛ս* «Обозрение российских владений за Кавказом», ч. I, II, III, IV, СПб., 1836.

թյունը», 1851 թ.՝ «Ռուսական աշխարհագրական ընկերության կովկասյան բաժանմունքը», իսկ 1869 թ.՝ «Կենդանիների ու բույսերի կլիմայաընտելացման ռուսական ընկերության Կովկասյան բաժանմունքը»։ Այդ ընկերությունները մի շարք փորձեր կատարեցին Անդրկովկասի երկրագործության զարգացման ուղղությամբ։ Նրանք ներմուծեցին նոր կուլտուրաներ կամ հին կուլտուրաների նոր, ավելի բերքատու տեսակներ, ձգտեցին փոխարինել գյուղատնտեսական հնամենի ու պրիմիտիվ գործիքները կատարելագործված գործիքներով ու մեքենաներով և այդ նպատակով Անգլիայից, Ամերիկայից ու Ֆրանսիայից բերեցին ժամանակակից դութաններ, կալսիչներ, քամհարներ, հնձիչներ, բամբակի, բրնձի և հում մետաքսի նախնական մշակման մեքենաներ և այլն[3]։ Բայց ընկերությունների այդ ձեռնարկումները երկրում տիրապետող ֆեոդալական-ճորտատիրական հարաբերությունների պատճառով քիչ հաջողություններ ունեցան։

Գյուղատնտեսության զարգացման համար ցարական իշխանությունները փորձեցին վերականգնել Արևելյան Հայաստանում պատերազմի հետևանքով ջայքայված ջրանցքները և կառուցել նորերը։ Այդ նպատակով Հայկական մարզ ուղարկվեցին ջրաշինարար ինժեներներ, հողաշինարար տեխնիկներ, երկրաչափներ և այլ մասնագետներ։ 1830—1840-ական թթ. արդեն վերանորոգվեցին Ղարաբատաշարի (Շարուրի տեղամասում), Կըրխբուլախի (Զանգիբասարի տեղամասում), Սարդարապատի, Մոլլա-Բայազետի, Ջաֆարաբադի (Սարդարապատի տեղամասում) և Երևանի շրջակայքի ջրանցքները։ 1850—1860 թթ. կառուցվեցին Քահանայի, Բազարչայի, Սադարակի, Քյալաշբեկի և Բողդողանի ջրանցքները։

Ռուսաստանի և Անդրկովկասի տնտեսական կապերն ամրապնդելու, ինչպես նաև ռազմաստրատեգիական նպատակներով ցարական իշխանությունները սկսեցին բարեկարգել ճանապարհները։ 1850-ական թթ. նրանք կառուցեցին ու խճապատեցին Թիֆլիս—Ախալցխա—Ախալքալաք—Ալեքսանդրապոլ—Երևան ուղին, իսկ 1865 թ. խճապատման աշխատանքներ սկսեցին Թիֆլիս—Ջուլֆա գծի վրա[5]։ Միաժամանակ ձեռնարկեցին այլ ուղիների կարգավորումը, որոնք Արևելյան Հայաստանի գյուղերը կապում էին գավառական կենտրոնների և հատկապես Երևանի ու Թիֆլիսի հետ և աշխուժացնում Անդրկովկասի ու Արևելյան Հայաստանի տնտեսական կյանքը։ 1860-ական թթ. կեսերին Երևանի նահանգապետը նշում էր, որ Ախալցխա—Ալեքսանդրապոլ ճանապարհով օրական 20 ֆուրգոն է գնում, իսկ գարնանն ու աշնանը՝ «անթիվ ու անհամար»։ Այնուհետև նա շարունակում էր. «Վերջին երեք տարվա ընթացքում տարանցիկ երթևեկությունը Երևանի նահանգով ուժեղացել է ավելի քան չորս անգամ և կասկած չկա, որ այդ ամենամյա աճը տարանցիկ ուղիների բարեկարգման ու մշակման հետ զուգընթաց մշտապես կշարունակվի»[6]։

---

[3] Տե՛ս «Обзор деятельности кавказского общества сельского хозяйства за 50 лет», Тифлис, 1901.

[4] Տե՛ս М. Балас, Виноделие в России, ч. III, СПб., 1897, էջ 217։

[5] Տե՛ս «Сборник сведений о Кавказе», т. III, Тифлис, 1875, էջ 565։

[6] Центральный государственный исторический архив в Ленинграде (այսուհետև — ЦГИАЛ), ф. 1268, оп. 13, д. 1, թ. 350։

Ռուսաստանի հետ Անդրկովկասի առևտրական կապերը ամրապնդելու համար ցարական կառավարությունը փոխեց իր արտաքին առևտրի մաքսային քաղաքականությունը։ Եթե 1821 թ. հոկտեմբերի 8-ի հրամանագրով արտասահմանից Անդրկովկաս ներմուծվող ապրանքները հարկի տակ էին դրվում միայն 5 տոկոսի մաքսատուրքով, ապա 1831 թ. հունիսի 3-ի հրամանագրով արգելվեց առևտուրը Անդրկովկասի ու Եվրոպայի միջև և խրախուսվեց տեղացի վաճառականների առևտրական կապը Ռուսաստանի հետ։ Ճիշտ է, հետագայում ցարիզմը մեղմեց այդ քաղաքականությունը և նպաստեց արևմտաևվրոպական երկրների ու Անդրկովկասի առևտրական հարաբերությունների աշխուժացմանը, բայց երկրամասի վաճառականներն արդեն կապվել էին ռուսական արդյունաբերական կենտրոնների հետ։

Անդրկովկասի ու Արևելյան Հայաստանի գյուղատնտեսության զարգացման համար ցարական կառավարությունն անցկացրեց նաև այլ միջոցառումներ, որոնք նպաստեցին ինչպես Անդրկովկասի այլ շրջանների, այնպես էլ Արևելյան Հայաստանի տնտեսական զարգացմանը։ Աստիճանաբար սկսեցին առաջադիմել գյուղատնտեսության բոլոր ճյուղերը։ Այսպես. 1829—1857 թթ. ցորենի ու գարու համախառն արտադրությունը 2.575.000 փթից հասավ 13.120.000 փթի[7]։ Միաժամանակ բարձրացավ աշխատանքի արտադրողականությունը։ 1850 թ. բնակչության մեկ շնչին ընկնում էր 2,5, իսկ 1857 թ.՝ ավելի քան 5 չետվերտ[8] (1 չետվերտը հավասար էր 10 փութ ցորենի, կամ 8 փութ գարու)։ 1850-ական թթ. փորձեր կատարվեցին հացահատիկային կուլտուրաների բարելավման ուղղությամբ և Նովոռոսիյսկից բերվեց ցորենի «Առնաուտկա» տեսակը։ Այդ փորձերը հաջողությամբ պսակվեցին. «Առնաուտկան» զգալիորեն տարածվեց Արևելյան Հայաստանի ու Ադրբեջանի մի շարք շրջաններում ու տվեց լավ արդյունք[9]։ Բայց 1860-ական թթ. սկզբներին հացահատիկների արտադրությունը նկատելիորեն նվազեց. 1861 թ. ստացված 1.473.000 չետվերտի դիմաց 1862 թ. հավաքվեց 1.094.722, 1863 թ.՝ 827.006, իսկ 1864 թ.՝ 730.362 չետվերտ ցորեն[10]։ Այդ նվազումը պայմանավորված էր բամբակենու ցանքատարածությունների ընդարձակումով։ Գյուղացիները, տեսնելով, որ բամբակենին ավելի եկամտաբեր է, իրենց հացահատիկների դաշտերը սկսեցին հատկացնել դրան։ Սակայն 1860-ական թթ. կեսերից նրանք թողեցին արդեն ոչ եկամտաբեր դարձած բամբակենին ու կրկին ընդարձակեցին հացահատիկի ցանքատարածությունները։ Երևանի նահանգապետն իր հաշվետվության մեջ գրում էր, որ 1865 թ. նախորդ տարվա համեմատությամբ ցանվել է 84 հազար չետվերտ ավելի ցորեն[11]։ Այնուհետև նա նշում էր, որ 1867 թ., 1866 թ. համեմատությամբ, ավելի ցանված ցորենը կազմել է 51.795 չետվերտ[12]։ Հատկանշական է, որ հացահատիկների մշա-

---

7 Տե՛ս М. А. Адонц, նշվ. աշխ., էջ 163։ «Сельское хозяйство и аграрные отношения», т. II, составил проф. В. П. Гугишвили, Тбилиси, 1950, էջ 663։

8 Տե՛ս ЦГИАЛ, ф. 1268, оп. 5, д. 359, թ. 85։ «Сельское хозяйство и аграрные отношения», т. II, էջ 662—663։

9 Տե՛ս «Обзор деятельности...», էջ 35։

10 Տե՛ս ЦГИАЛ, ф. 1268, оп. 10, д. 127, թթ. 353—354։

11 Տե՛ս նույն տեղում, оп. 11, д. 142, թ. 344։

12 Տե՛ս նույն տեղում, оп. 13, д. 1, թ. 172։

կումով, երկրի արդյունաբերական կյանքի թույլ զարգացման պատճառով, զբաղվում էր նաև քաղաքային բնակչության որոշ մասը։

Միացումից հետո վերելք ապրեց նաև Արևելյան Հայաստանի անասնապահությունը։ 1829—1865 թթ. ընթացքում անասունների գլխաքանակը ավելացավ մոտ 1,5 անգամ[13]։ Ստանալով անձի ու գույքի ապահովություն, գյուղացիները ձգտում էին մեծացնել անասունների թիվը։ Դարի կեսերին ցարական իշխանությունները փորձեցին բարելավել ձիերի ցեղը և 1859 թ. հիմնեցին ձիաբուծարան, սակայն քիչ արդյունքի հասան[14]։ Նրանք փորձեցին յավացնել նաև ոչխարների տեսակները, բայց այդ փորձերը անհաջողության մատնվեցին։

Առաջընթաց կատարվեց նաև այգեգործության ասպարեզում։ Վերականգնվեցին ռուս-պարսկական պատերազմի ընթացքում ավերված այգիները, գցվեցին նորերը։ 1840—1850-ական թթ. իշխանությունները Ղրիմից բերեցին խնձորի, տանձի, ծիրանի, դեղձի, սալորի և այլ մրգերի տնկիներ ու բաժանեցին տեղացիներին։ 1850—1851 թթ. Անդրկովկասում նրանք բաժանեցին 15.000 տնկի[15]։ Այգեգործությունն Արևելյան Հայաստանում զարգանում էր։ Միայն Օրդուբադում 1854—1866 թթ. այգիների թիվը 335-ից հասավ 540-ի[16]։ 1864 թ. Երևանի նահանգապետը Կովկասի փոխարքային գրում էր, որ նահանգում այգեգործությունը «կազմում է գյուղատնտեսության գլխավոր ճյուղերից մեկը», որ այգիների տարածությունը 15.000 դեսյատին է, որոնցից տարեկան ստացվում է մինչև 200.000 փութ կամ 400.000 ռուբլու բերք։ Իրենց բերքատվությամբ աչքի էին ընկնում հատկապես խաղողի, ծիրանի, խնձորի ու տանձի այգիները[17]։ Միայն Օրդուբադում 1860-ական թթ. կեսերին տարեկան արտադրվում էր 10.000 փութ խաղող, 2000 փութ ծիրան, 1000 փութ դեղձ, 1000 փութ խնձոր, 600 փութ ընկույզ, 500 փութ տանձ, 500 փութ սերկևիլ, 300 փութ սալոր և այլն[18]։ Հայաստանի խաղողն ու մրգերը հռչակված էին ամբողջ Անդրկովկասում։

Արևելյան Հայաստանում աշխուժանում էր նաև բանջարաբուծությունը։ Այն տարածված էր համարյա ամենուրեք, բայց ամենից շատ՝ դաշտային շրջաններում։ 1870 թ. Երևանի նահանգում բանջարեղենի տարածությունը կազմում էր 5776 դեսյատին, որից հավաքվել էր շուրջ 1 միլիոն փութ բերք[19]։

XIX դարի 30—40-ական թթ. սկսվեց կաղամբի ու կարտոֆիլի մշակումը։ Հետագա տասնամյակներում այդ կուլտուրաները տարածվեցին երկրի ոչ միայն ցածրադիր, այլև բարձրադիր շրջաններում՝ Շիրակում, Լոռիում, Ղազախ—Շամշադինում, Դարալագյազում, Ապարանում և այլն։ 1850-ական թթ.

---

13 М. А. Адонц, նշվ. աշխ., էջ 168։ «Сельское хозяйство и аграрные отношения», т. II, էջ 669։

14 Տե՛ս «Записки Кавказского общества сельского хозяйства», Тифлис, 1862, № 3—6, отд. III, էջ 43 (այսուհետև՝ «Записки...»).

15 Տե՛ս «Обзор деятельности...», էջ 144։

16 Տե՛ս М. Балас, Историко-статистический очерк виноделия в России (Кавказ и Крым), СПб., 1877, էջ 44։

17 Տե՛ս ЦГИАЛ, ф. 1268, оп. 10, д. 127, թթ. 158—159։

18 Տե՛ս «Записки...», 1867, № 5, էջ 11։

19 Տե՛ս «Сборник сведений о Кавказе», т. II. Тифлис, 1872, էջ 185։

սկզբներին Դարալագյազում ցանում էին տարեկան 12 խալվար կամ 360 փութ կարտոֆիլ և մեկ փթից ստանում 7—8 փութ բերք[20]։

Այդ տարիներին ռուսական ֆաբրիկաներն ու գործարանները հումքով բավարարելու համար ցարական իշխանությունները ձգտեցին Արևելյան Հայաստանում զարգացնել հատկապես բամբակագործությունը։ Դեռ 1830—1840-ական թթ. Հյուսիսային Ամերիկայից, Եգիպտոսից ու Հնդկաստանից նրանք ներմուծեցին բամբակենու բարձրորակ սերմեր ու բամբակազտիչ մեքենաներ՝ քոթանջիներ։ Սակայն անհաջողության մատնվեցին։ 1850-ական թթ. իշխանությունները նոր փորձեր կատարեցին բամբակագործության զարգացման ուղղությամբ, բայց դարձյալ չհասան էական արդյունքի։ Ինչպես 1830-ական թթ. սկզբներին, այնպես էլ 1850-ական թթ. վերջերին տարեկան արտադրվում էր միջին հաշվով 30.000 փութ բամբակ։ 1860-ական թթ. սկզբներին բամբակի արտադրությունը Երևանի նահանգում որոշակի վերելք ապրեց, և դա կատարվեց ոչ այնքան իշխանությունների ձեռնարկած միջոցառումների, որքան Ամերիկայում բռնկված քաղաքացիական պատերազմների հետևանքով բամբակի ներմուծումը պակասելու շնորհիվ։ Միայն երեք տարվա ընթացքում (1861—1864 թթ.) բամբակի արտադրությունը 30.000 փթից հասավ 300.000 փթի[21]։ Միաժամանակ բարելավվեց նրա որակը։ Շնորհիվ այն բանի, որ ռուսական տեքստիլ ձեռնարկությունների ներկայացուցիչները բամբակի արտասահմանյան տեսակին ավելի բարձր էին վճարում, քան տեղականին, գյուղացիները թողնում էին տեղականը և մշակում ամերիկյան, հնդկական կամ եգիպտական տեսակը։ Դրա հետևանքով երկրի որոշ շրջաններում տեղական բամբակենին արտամղվեց։ 1862 թ. ժամանակակիցներից մեկը գրում էր, որ Օրդուբադում ու նրա գյուղերում բամբակի ամերիկյան տեսակը «համարյա ամբողջովին արտամղել է տեղական տեսակը»[22]։ Բարելավում մտցվեց նաև բամբակի նախնական մշակման մեջ։ 1872 թ. Բարոն Նիկոլաին գրում էր. «Վերջին ժամանակներս Երևանի նահանգի մի քանի տնտեսություններում ներդրվեցին արտասահմանյան բամբակի ու Եվրոպական կառուցվածքի մեքենաների բարձր տեսակները, որը, անշուշտ, կամրապնդի տնտեսության այդ ճյուղի դրությունը»[23]։ Բամբակագործությամբ զբաղվում էին Շարուր—Դարալագյազի, Նախիջևանի, Էջմիածնի ու հատկապես Երևանի գավառներում։ 1860-ական թթ. կեսերից, երբ քաղաքացիական պատերազմն Ամերիկայում ավարտվեց, վերականգնվեց ամերիկյան բամբակի արտահանումը Եվրոպա և Ռուսաստան։ Դրա հետևանքով Արևելյան Հայաստանում բամբակի արտադրությունը վայրէջք ապրեց։ Եթե 1864 թ. Երևանի նահանգում բամբակենու ցանքատարածությունները կազմում էին 32.000 դեսյատին, ապա 1865 թ.՝ միայն 22.000 դեսյատին[24]։ Սակայն

---

20 Տե՛ս «Кавказский календарь на 1855 г.», отд. IV, էջ 388։

21 Տե՛ս ЦГИАЛ, ф. 1268, оп. 10, д. 127, թ. 356, «Записки...», 1864, № 1, էջ 8։

22 «Записки», 1862, № 3—6, отд. III, էջ 13։

23 Барон Николаи, Отчет по главному управлению наместника Кавказского за первое десятилетие управления Кавказским и Закавказским краем его императорским высочеством великим князем Михаилом Николаевичем, 6 декабря 1862—6 декабря 1872 гг., Тифлис 1873, էջ 252։

24 Տե՛ս ЦГИАЛ, ф. 1268, оп. 10, д. 127, թ. 354, оп. 11, д. 142, թ. 344։

1880-ական թթ. բամբակի արտադրությունը նորից վերելք ապրեց, իսկ XX դարի սկզբին մեծ չափերի հասավ։

Ցարական իշխանությունները, ելնելով ռուս կապիտալիստների շահերից, փորձեցին Անդրկովկասում բարելավել ու զարգացնել նաև շերամապահությունը։ 1836 թ. Պետերբուրգում նրանք հիմնեցին «Անդրկովկասի երկրամասում շերամապահության և առևտրական արդյունաբերության խրախուսման ու բարելավման ընկերությունը», որը կարճ ժամանակամիջոցում տարածեց շերամապահությունը նոր շրջաններում ու զգալիորեն բարելավեց այն։ 1850-ական թթ. իշխանությունները ներմուծեցին շերամի ճապոնական, չինական, արաբական, իտալական, ֆրանսիական բարձրորակ տեսակները և արմատավորելով դրանք Անդրկովկասում, արտամղեցին տեղական ցածրորակ տեսակները[25]։ Այդ և այլ միջոցառումների հետևանքով երկրամասում աճեց հում մետաքսի արտադրությունը. 1849 թ. արտադրվել էր 30.000, իսկ 1859 թ.՝ 53.000 փութ հում մետաքս[26]։ Օրդուբադի գավառամասում, որը Երևանի նահանգի շերամապահության համարյա միակ շրջանն էր, 1850-ական թթ. վերջերին ու 1860-ական թթ. սկզբներին տարեկան միջին հաշվով արտադրվում էր մոտ 12.000 փութ հում մետաքս[27]։

Միացումից հետո որոշ տեղաշարժեր կատարվեցին Արևելյան Հայաստանի գյուղատնտեսության նաև մյուս ճյուղերում։ 1830-ական թթ. փորձեցին տեղական ծխախոտը փոխարինել ամերիկյան բարձրորակ տեսակով[28], իսկ 1860-ական թթ.՝ տեղական, այսպես կոչված, ճահճային, քիչ բերքատու բրինձը՝ չինական բարձր բերքատու բրնձով։ Եթե տեղականի մի հատիկը տալիս էր 8—10, ապա չինականը՝ 40—60 հասկ[29]։ Բայց տիրապետող ֆեոդալական-ճորտատիրական պայմաններում այդ փորձերը սոսկ մասնակի հաջողություն ունեցան։ Դարակեսին առաջադիմեց նաև յուղատու բույսերի, մասնավորապես կտավատի արտադրությունը, որը մշակում էին գլխավորապես Էջմիածնի գավառում։ Մեկ դեսյատինից ստացվում էր 100—150 փութ կտավատ[30]։

* * *

Պարսկական տիրապետության ժամանակ Արևելյան Հայաստանի գյուղատնտեսությունն ուներ համարյա բացառապես նատուրալ բնույթ։ Գյուղացիները իրենք էին սպառում իրենց արտադրած մթերքները և հաղվագյուտ դեպքերում ուղարկում վաճառքի։ Ռուսաստանին միացումից հետո երկրի գյուղատնտեսությունը կամաց-կամաց դուրս եկավ նատուրալ վիճակից և սկսեց կապվել շուկայի հետ։ Ավելի կամ պակաս չափերով ապրանքային բնույթ ընդունեցին նրա համարյա բոլոր ճյուղերը։ 1840-ական թթ. գյուղացիները քիչ էին վաճառում ցորեն ու դարի և վաճառում էին «ոչ այլ կերպ, քան տեղում»[31]։ Բացառություն էին կազմում այն շրջանները, որոնք հացահատիկ էին արտահանում հարևան նահանգները և նույնիսկ արտասահման։

25 Տե՛ս «Обзор деятельности...», էջ 160։

26 «Промышленность» (журнал), т. III, кн. 1, 1861, էջ 68։

27 Տե՛ս «Записки...», 1867, № 5, էջ 12։

28 Տե՛ս «Акты, собранные Кавказскою археографическою коммиссиею», т. X. док. 171, էջ 174։

29 Տե՛ս «Обзор деятельности...», էջ 85։

30 Տե՛ս «Записки...», 1870, № 2, отд. II, էջ 79։

31 «Кавказский календарь на 1851 г.», отд. IV, էջ 9։

Այդ տեսակետից աչքի էր ընկնում Ալեքսանդրապոլի գավառը, որն իր ցորենն ու գարին ուղարկում էր Թիֆլիս ու Թուրքիա[32]։ Սակայն 1850-ական թթ. վերջերին ու 1860-ական թթ. Արևելյան Հայաստանի հացահատիկային կուլտուրաները ավելի շատ են դառնում առք ու վաճառքի առարկա։ 1858 թ. Երևանի նահանգապետը իր հաշվետվության մեջ գրում էր. «Հացահատիկի մշակությունը կազմում է Երևանի նահանգի գյուղատնտեսության ամենակարևոր ճյուղը։ Այդ նահանգը կարելի է համարել ամբողջ Անդրկովկասի հացի շտեմարանը։ 1857 թ. հացի վաճառքը տեղի ունեցավ զորամասերին մթերքներ մատակարարողների միջոցով, իսկ արտահանումը արտասահման թույլատրվեց նույն տարվա վերջին և ուղարկվեց ոչ քիչ քանակությամբ»[33]։ Ուշագրավ է, որ Դաղստանի Ռուսաստանին միացումից հետո այնտեղի լեռնականներից շատերը իրենց համար անհրաժեշտ հացահատիկը գնում էին Երևանի նահանգում[34]։

Հացահատիկների արտադրությամբ ու վաճառքով զբաղվում էին Արևելյան Հայաստանի համարյա բոլոր շրջանները, բայց ամենից շատ՝ Ալեքսանդրապոլի ու Նոր Բայազետի գավառները։ Բավական է նշել, որ 1860-ական թթ. վերջերին եթե Երևանի ու Էջմիածնի գավառներում հացահատիկներն զբաղեցնում էին մշակելի հողերի 32—43 տոկոսը, ապա Ալեքսանդրապոլի ու Նոր Բայազետի գավառներում՝ 65,8—69 տոկոսը[35]։ Ալեքսանդրապոլի գավառը կամ Շիրակի դաշտը իր ապրանքային հացն ուղարկում էր ոչ այնքան Արևելյան Հայաստանի ցածրադիր շրջանները, որքան Վրաստան։

Դժբախտաբար, մենք վիճակագրական բավարար տվյալներ չունենք այն մասին, թե ցորենի ու գարու ապրանքային մասը նրանց համախառն արտադրանքի որ տոկոսն էր կազմում։ Բայց մեր ձեռքի տակ եղած կցկտուր տեղեկությունները հնարավորություն են տալիս որոշ գաղափար կազմելու այդ մասին։ Դարալագյազում, ուր բնակիչները զբաղվում էին առավելապես անասնապահությամբ, 1852 թ. հավաքված 14.750 խալվար ցորենից 2400-ը օգտագործվել է իբրև սերմացու, 11.550-ը՝ անձնական սպառման համար, իսկ 800 խալվարը վաճառվել է Նախիջևանում՝ Ղարաբաղի քոչվորներին։ Այդ նույն թվականին 2166 խալվար գարուց իբրև սերմացու օգտագործվել է 315-ը, անձնական սպառման համար՝ 1.451-ը, և վաճառվել է 400 խալվար[36]։ Այլ կերպ ասած, եթե ցորենի ապրանքային մասը կազմել է նրա համախառն արտադրանքի շուրջ 5 տոկոսը, ապա գարունը՝ ավելի քան 19 տոկոսը։ Ելիզավետպոլի գավառում, որի կազմում էր նաև Ղազախ—Շամշադինը, 1859 թ. արտադրվել է 420.000 չետվերտ ցորեն ու գարի, որից 369.507-ը օգտագործվել է սեփական կարիքների համար, իսկ 50.493-ը կամ 14 տոկոսը վաճառվել է, ընդ որում վաճառվածի 2/3-ը կազմել է ցորենը, իսկ 1/3-ը՝ գարին[37]։ Դրանք Արևելյան Հայաստանի այն շրջաններն էին, ուր հա-

---

32 «Записки Кавказского отдела императорского русского географического общества», кн. I, Тифлис, 1852, էջ 160։

33 ЦГИАЛ, ф. 1268, оп. 9, д. 311, թ. 99։

34 Նույն տեղում, ց. 10, գ. 274, թ. 1։

35 Տե՛ս В. Геевский, Краткий очерк земледелия за Кавказом, Тифлис, 1887, էջ 9։

36 Տե՛ս «Кавказский календарь на 1855 г.», отд. IV, էջ 387։

37 Տե՛ս Н. Серебряков, Сельское хозяйство в Елисаветпольском уезде. Тифлис, 1862, էջ 181։

մեմատաբար քիչ էին զբաղվում հացահատիկների մշակությամբ։ Կասկածից վեր է, որ հիմնականում հացահատիկների մշակությամբ զբաղվող շրջաններում ցորենի ու գարու ապրանքային մասն ավելի բարձր էր։

Ապրանքային հացահատիկն իրացվում էր ոչ միայն և ոչ այնքան գյուղացիների, որքան քաղաքացիների ու ռուսական զորքերի կողմից։ Խոշոր եկամուտներ էին ստանում հատկապես պետական մատակարարողները, որոնք լայն գործունեություն էին ծավալում երկրամասի հացառատ շրջաններում։ 1862 թ. ժամանակակիցներից մեկը գրում էր, որ պետական մատակարարողները «սովորաբար խարիսխ են գցում Ալեքսանդրապոլի գավառում և Երևանի նահանգի մյուս հացառատ վայրերում... երկրամասի մնացած շրջաններում նրանց ազդեցությունը, անգամ բերքառատ տարիներին, աննշան է»[38]։ Նա այնուհետև շարունակում էր, որ այդ մատակարարողները 1861 թ. Անդրկովկասում գնել են մոտ 60.000 չետվերտ ցորեն, որի մեծ մասը՝ Երևանի նահանգում։ Անմիջական արտադրողի ու սպառողի միջև գնորդ-առևտրականի երևան գալը վկայում էր ապրանքային տնտեսության զարգացման մասին։

Բացի ցորենից ու գարուց, XIX դարի 30—60-ական թթ. առք ու վաճառքի առարկա էր դարձել նաև բրինձը։ Բնակիչները Երևանի, Էջմիածնի ու Նախիջևանի գավառներից այն արտահանում էին լեռնային շրջանները, մասնավորապես Ալեքսանդրապոլի ու Նոր Բայազետի գավառները։ Նրանք բրինձը տանում էին վաճառելու նաև Վրաստան (հատկապես Թիֆլիս) ու Ադրբեջան, ինչպես և Թուրքիա։ Երևանի նահանգապետը նշում էր, որ 1865 թ. Երևանի նահանգից Թուրքիա է արտահանվել շուրջ 90 հազ. ռուբլու բրինձ և այդչափ էլ սպառվել է երկրի ներսում, «եթե ոչ ավելի»[39]։

Արևելյան Հայաստանի անասնապահությունը միացումից հետո նույնպես ապրանքային բնույթ էր ստացել։ Երկրի տարբեր շրջաններում անասունները վաճառվում էին տարբեր գներով։ Բարալագյաղում 1850-ական թթ. սկզբներին եզը վաճառվում էր միջին հաշվով 10 ռուբլով, գոմեշը՝ 15, կովը՝ 10, ձին՝ 35, ոչխարը՝ 5 ռուբլով, ոչխարը՝ 2 ռուբլի 25 կոպեկով, իսկ այծը՝ 1 ռուբլի 50 կոպեկով[40]։ Առևտրային անասնապահության մեջ աչքի էին ընկնում հարուստ գյուղացիները, հատկապես ռուս վերաբնակիչների ունևոր շերտերը։ 1862 թ. Ի. Սերեբրյակովը գրում էր, որ Ղազախ—Շամշադինի շրջանում վերջիններս «անասուններ են բուծում ոչ այնքան աշխատեցնելու, որքան մսագործներին վաճառելու նպատակով»[41]։ Անասունները սովորաբար վաճառվում էին Արևելյան Հայաստանի ներսում, բայց հաճախ ուղարկվում էին Ադրբեջան ու Վրաստան, հատկապես Թիֆլիս, իսկ երբեմն էլ արտահանվում էին Իրան ու Թուրքիա։ Երկրի որոշ շրջաններում շուկա էր գնում մանր եղջերավոր անասունների մոտ 1/4-ը[42]։

Բացի անասուններից, ապրանքադրամական հարաբերությունների մեջ էին ներքաշվել նաև անասնամթերքները՝ կարագը, յուղը, պանիրը, բուրդը, կաշին, մորթը։ Կաթնամթերքները վաճառվում էին հիմնականում երկրի ներ-

38 «Записки...», 1862, отд. III, № 3—6, էջ 8—9։
39 Տե՛ս ЦГИАЛ, ф. 1268, оп. 11, д. 142, թ. 344։
40 Տե՛ս «Кавказский календарь на 1855 г.», отд. IV, էջ 388։
41 И. Серебряков, նշվ. աշխ., էջ 168։
42 Նույն տեղում, էջ 182։

սում, իսկ բուրդը, կաշին ու մորթը կգալի չափով արտահանվում էին հարևան երկրներն ու արտասահման։ Այսպես, օրինակ, 1850 թ. Երևանի նահանգից Թուրքիա է ուղարկվել մոտ 2000 գոմեշի և համարյա այդքան էլ եղան կաշի, իսկ Իրան՝ շուրջ 2000 գոմեշի և 1000 եղան կաշի[43]։ Բուրդը ուղարկվում էր Ռուսաստան, երբեմն նաև արտասահման, ընդհուպ մինչև Մարսել[44]։

XIX դարի կեսերին առևտրավաշխառուական կապիտալն արդեն զգալի դեր էր խաղում անասնապահության մեջ։ Երկրի մի շարք վայրերում այդ երևույթը մեծ չափերի էր հասել։ 1862 թ. Ի. Սերեբրյակովը նշում էր, որ Արևելյան Հայաստանի հյուսիսային շրջաններում «շատ քիչ էր պատահում, որ արտադրողն իր մթերքները վաճառելիս գործ ունենար անմիջապես սպառողի հետ, կամ չծախսեր դրանց գինը մինչև վաճառքը»։ Հարուստ դրամատերերը, գրում էր նա, «գյուղում հանդես են գալիս որպես նրա լիիրավ տերը»[45]։

XIX դարի կեսերին շուկայական հարաբերությունների մեջ էին ներքաշվել Արևելյան Հայաստանի նաև այգեգործության արդյունքները։ Այգետերերը դրանք արտահանում էին դեպի քաղաքները կամ գավառները՝ գլխավորապես երկրի նախալեռնային ու լեռնային շրջանները։ Վաճառքը կատարվում էր կա՛մ փողով, կա՛մ գյուղատնտեսական մթերքներով, որը վկայում էր դրամական տնտեսության տակավին թույլ զարգացման մասին։ Երկրի տարբեր շրջաններում հատապտուղներն ու մրգերը վաճառվում էին տարբեր գներով։ Օրդուբադում, օրինակ, 1860-ական թթ. կեսերին 1 փութ խաղողը վաճառվում էր 60 կոպ., ծիրանը՝ 1 ռուբ. 50 կոպ.—3 ռուբ., դեղձը՝ 1 ռուբ.—1 ռուբ. 20 կոպ., ընկույզը՝ 1 ռուբ., տանձը՝ 1 ռուբ., խնձորը՝ 60—80 կոպ., սալորը՝ 1 ռուբ., սերկևիլը՝ 1 ռուբ. և այլն[46]։ Արևելյան Հայաստանի չիրն ու չամիչը արտահանվում էին հարևան երկրներ, անգամ Թուրքիա և Իրան[47]։ Նշված ժամանակաշրջանում առևտրի առարկա էին դարձել նաև բանջարաբոստանային մթերքները։

Բամբակի արտադրությունը Ռուսաստանին միացումից հետո տակավին նատուրալ նշանակություն ուներ։ Գյուղացիները օգտագործում էին այն գերազանցապես իրենց տնտեսական կարիքների համար, շուկա ուղարկելով միայն նրա փոքր մասը։ Նրանք բամբակը վաճառում էին երկրի ներսում, հարևան Վրաստանում ու Ադրբեջանում և չնչին քանակությամբ արտահանում էին նաև Թուրքիա ու Իրան։ Ըստ մեր ձեռքի տակ եղած տվյալների, Երևանի նահանգից Թուրքիա է ուղարկվել 1857 թ.՝ 2095 փութ, 1858 թ.՝ 1370 փութ, իսկ 1859 թ.՝ 3000 փութ բամբակ[48]։

Սակայն 1860-ական թթ. սկզբներից Արևելյան Հայաստանում բամբակի արտադրությունը ստացավ գերազանցապես ապրանքային նշանակություն։ Մեծագումար դրամատերերը քաղաքներում ու գյուղերում գնում էին այն և ուղարկում Մոսկվա կամ Ռուսաստանի արդյունաբերական այլ կենտրոնները։ Երևանի նահանգապետն իր հաշվետվություններից մեկում գրում էր. «Քա-

43 Տե՛ս «Кавказский календарь на 1851 г.», отд. IV, էջ 15։
44 Տե՛ս Барон Николаи, Отчет..., էջ 252։
45 И. Серебряков, նշվ. աշխ., էջ 178։
46 Տե՛ս «Записки...», 1867, № 5, էջ 11։
47 Տե՛ս «Кавказский календарь на 1868 г.», отд. IV, էջ 409։
48 Տե՛ս «Кавказ», 1862, № 69.

ղաքային շուկաները և հատկապես Երևանինը լեցուն են գավառներից բերված բամբակով, և կապիտալիստները եռանդով դնում են այն՝ Թիֆլիս ու Մոսկվա ուղարկելու համար»[49]։ Սկսած 1862 թ. Արևելյան Հայաստանի բամբակը արտահանվում է նաև Արևմտյան Եվրոպա։ Ի. Ս. Խատիսովը նշում էր, որ «1862 թ. վերջին Անդրկովկասի բամբակի առաջին պարտիան՝ 6000 փութ, հայտնվեց Կոստանդնուպոլսի շուկայում և վաճառվեց մեծ շահով։ Այդ օրվանից Անդրկովկասի երկրամասը, այսպես ասած, միջամտեց Եվրոպայի բամբակի առևտրին»[50]։

Ռուսաստանին միացումից հետո Անդրկովկասում ավելի լայն շուկայական հարաբերությունների մեջ ներքաշվեց շերամապահությունը։ Հում մետաքսը երկրամասից արտահանվում էր գլխավորապես Ռուսաստան՝ Մոսկվա, Նիժնի Նովգորոդ ու այլ քաղաքներ։ 1840-ական թթ. Անդրկովկասից տարեկան միջին հաշվով 17 հազ. փութ հում մետաքս էր ուղարկվում Ռուսաստան։ Զգալի քանակությամբ մետաքսահումք էր վաճառվում նաև Արևմտյան Եվրոպայի արդյունաբերական կենտրոններին։ Բավական է նշել, որ 1841 թ. արտահանվել է արտասահման 3954 փութ, իսկ 1857 թ.՝ 11554 փութ հում մետաքս[51]։ 1862 թ. ռուսական պաշտոնական «Кавказ» թերթը գրում էր. «Մետաքսի առևտուրը գտնվում է բացառապես ագուլիսցի վաճառականների ձեռքին.· նրանց մեջ կան այնպիսի տներ, որոնք զգալի կապիտալներ ունեն և հայտնի են մեր մոսկովյան մետաքսի ֆաբրիկանտներին, օրինակ՝ Տեր-Մկրտչյանցի տուն, որը վարում է այդ առևտուրը ավելի քան 500.000 ռուբլով»[52]։

XIX դարի 30—60-ական թթ. որոշ չափով առք ու վաճառքի առարկա էր դարձել նաև Արևելյան Հայաստանի ծխախոտը։ Բնակիչները մշակում էին առավելապես ծխախոտի տեղական տեսակը և 1 փութը վաճառում 4,6 ռուբլով[53]։ Այդ նույն ժամանակամիջոցում շուկայական հարաբերությունների մեջ էր ներքաշվել նաև յուղատու բույսերի, մասնավորապես կտավատի արտադրությունը։ 1830-ական թթ. կտավատի ձեթը վաճառվում էր համարյա բացառապես երկրի ներսում, բայց 1840-ական թթ. այն սկսում է արտահանվել Վրաստան, հատկապես Թիֆլիս։ Յու. Ա. Գագեմեյստերը 1845 թ. նշում էր, որ Հայկական մարզից կտավատի ձեթը «վերջերս սկսեցին արտահանել Թիֆլիս, ուր 1 փութը վաճառվում է 4,6 ռուբլով»[54]։ 1860-ական թթ. կտավատի 1 խալվարը վաճառվում էր 30—40 ռուբլով, կամ 1 փութը՝ 1-ից 1,5 ռուբլով, իսկ 1 փութ ձեթը՝ 6—8 ռուբլով[55]։

* * *

Ապրանքադրամական հարաբերությունների զարգացումը առաջ բերեց գյուղացիության սոցիալական շերտավորում։ Ունևոր գյուղացիները զանա-

---

49 ЦГИАЛ, ф. 1268, оп. 13, д. 1, թ. 357։

50 «Записки...», 1864, № 1, էջ 7։

51 Տե՛ս М. Рожкова, Экономическая политика царского правительства на Среднем Востоке во второй четверти XIX в. и русская буржуазия, М., 1849, էջ 129։

52 «Кавказ», 1862, № 52.

53 Տե՛ս И. Серебряков, նշվ. աշխ., էջ 157։

54 Ю. А. Гагемейстер, Закавказские очерки, СПб., 1845, էջ 10։

55 Տե՛ս «Записки...», 1870, № 2, отд. II, էջ 79։

զան ուղիներով ընդարձակում էին իրենց հողատարածությունները և մեծացնում անասունների գլխաքանակը, իսկ չունևորները, չդիմանալով տնտեսական մրցակցությանը, գնալով արտամղվում էին գյուղական պրոլետարիատի շարքերը։ Հարուստները այդ բանը կատարում էին համայնական հողերը բռնագրավելու, առք ու վաճառքի, վարձակալության, վաշխառության և այլ ճանապարհներով[56]։ XIX դարի 50—60-ական թթ. Արևելյան Հայաստանում արդեն զգալի թիվ էին կազմում հողազուրկ գյուղացիները։ Ս. Էսաձեի տվյալներով, 60-ական թթ. այդ վիճակում էր Երևանի գավառի բոլոր մուլքադարական գյուղացիների 1/3-ը, Էջմիածնի գավառում՝ 800, իսկ Նախիջևանի գավառում՝ 400 տղամարդ[57]։ Սուրմալուի գավառի Կողբ գյուղում 1868 թ. կար 60 հողազուրկ տնտեսություն[58]։ Սակայն երկրի որոշ մասերում (օրինակ՝ Ղազախ—Շամշադինում, Նոր Բայազետի գավառում և այլն)[59] սոցիալական շերտավորման պրոցեսը նոր էր սկսվել։ Այսպես, ըստ գյուղատնտես Ի. Սերեբրյակովի տվյալների Շամշադինի տեղամասի Ղարատաշ (Սևքար) գյուղում 1859 թ. հաշվվում էր 51 տնտեսություն, որոնցից 6-ը ունեին մինչև 4 օրավար (1 օրավարը=0,70 հեկտարի), 38-ը՝ 4,5—14 և, վերջապես, 7-ը՝ 15 և ավելի օրավար հող։ Եթե առաջիններին համարենք չունևորներ, երկրորդներին՝ միջակներ, իսկ վերջինը՝ հարուստներ, ապա կստացվի, որ չունևորները կազմում էին գյուղի բնակչության 11,5, միջակները՝ 74,5, իսկ հարուստները՝ 14 տոկոսը։ Ղարատաշում չունևորների տոկոսը փոքր-ինչ բարձրանում է, երբ վերլուծում ենք անասնապահության վերաբերյալ տվյալները։ Գյուղում եղած 51 տնտեսություններից անասնազուրկները կազմում էին 5 տնտեսություն, 1—1,5 գլուխ ունեցողները՝ 9, 2 գլուխ ունեցողները՝ 2, 2,5—4 գլուխ ունեցողները՝ 12, 5—10 գլուխ ունեցողները՝ 7, 11—14 գլուխ ունեցողները՝ 8 և, վերջապես, 15 ու ավելի գլուխ ունեցողները՝ 8 տնտեսություն։ Եթե առաջին երկուսը համարենք չունևորներ, վերջինը՝ հարուստներ, իսկ մնացած չորսը՝ միջակներ, ապա կստացվի, որ չունևորները կազմում էին 23 տոկոսը, միջակները՝ 63, իսկ հարուստները՝ 14 տոկոսը։ Այդ տվյալները ցույց են տալիս, որ գյուղում միջակ գյուղացիությունը դեռ գերիշխող էր։

Արտադրության միջոցներից զրկված կամ աղքատացած գյուղացիները դիմում էին բատրակության, վարձվելով ամենից առաջ իրենց ունևոր համագյուղացիների մոտ։ Ի. Սերեբրյակովը 1859 թ. գրում էր, որ Ղազախ—Շամշադինում «ով բոլորովին անասնազուրկ է և չունի գութան, աշխատում է հարուստների մոտ»։ Բայց նա միաժամանակ ավելացնում էր, որ դրանց թիվը մեծ չէ, նույնիսկ չի հասնում հարուստների քանակին[60]։ Ուշագրավ է, որ վարձու աշխատանքի արդեն սկսում են դիմել նաև կանայք, «սակայն ոչ հաճույքով, ծայրագույն աղքատության դեպքում և այն ժամանակ, երբ նրանց հետ վարձվում են իրենց ամուսինները կամ մոտիկ հարազատները, որպեսզի նեղացնելու դեպքում պաշտպանություն ունենան»[61]։

56 Տե՛ս «Крестьянское движение в Армении в XIX в.», сост. В. А. Рштуни. Ереван, 1949, էջ 86։

57 С. Эсадзе, Историческая записка об управлении Кавказом, т. 1, Тифлис. 1907, էջ 558—559։

58 Տե՛ս ЦГИАЛ, ф. 381, д. 18774.

59 Տե՛ս С. Эсадзе, նշվ. աշխ., էջ 558—559։

60 И. Серебряков, նշվ. աշխ., էջ 87։

61 Նույն տեղում, էջ 80—81։

Վարձու աշխատանքը թափանցել էր գյուղատնտեսության բոլոր գլխավոր ճյուղերը, բայց համեմատաբար շատ էր կիրառվում բամբակագործության, այգեգործության և մասամբ հացահատիկների մշակման բնագավառներում։ Այդ շրջանների հարուստները սովորաբար վարձում էին իրենց աղքատացած համագյուղացիներին։ Սակայն բերքահավաքի ժամանակ տեղական ուժը անբավարար էր, ուստի նրանք վարձում էին նաև երկրի լեռնային շրջաններից բատրակության դիմած մարդկանց։ Հարուստները վարձում էին բատրակներին մեկ կամ մի քանի տարով, բայց ավելի հաճախ՝ օրերով ու սեզոններով։ Բատրակների վարձումը տարիներով կատարվում էր մեծ մասամբ անասնապահության մեջ, ուր նրանց համար մշտական աշխատանք կար, իսկ օրերով ու սեզոններով՝ գյուղատնտեսության մյուս ճյուղերում։

Երկրի տարբեր շրջաններում բատրակների աշխատավարձը տարբեր էր։ Ղազախ—Շամշադինում XIX դարի 50-ական թթ. վերջերին և 60-ական թթ. սկզբներին տարիներով վարձվողը սննդից բացի 1 տարվա համար ստանում էր 20—50 ռուբլի, իսկ օրերով վարձվողը 1 օրվա համար՝ 15—60 կոպ[62]։ Նրանք հաճախ վարձատրվում էին բնամթերքով, ընդ որում ցածրադիր շրջաններում հացահատիկի բերքահավաքի ժամանակ ստանում էին իրենց հավաքածի 1/5-ը, իսկ լեռնային շրջաններում՝ 1/8-ը[63]։ Բայց դա կատարվում էր խիստ հազվադյուտ դեպքերում՝ տարվա մեջ 7—8 օր[64], իսկ մնացած ժամանակ ստանում էին օրական 30—50 կոպ.։ Բատրակների աշխատավարձը ցածր էր նաև այգեգործական շրջաններում։ Էջմիածնի գավառում 1870 թ. նրանք ստանում էին օրական 25—40 կոպ., Նախիջևանի գավառում՝ 30—50 կոպ.[65], իսկ Օրդուբադի տեղամասում՝ 15—30 կոպ.[66]։ Փողի կարիքը հաճախ ստիպում էր շունևորներին դեռ ձմռանը վաճառել իրենց աշխատուժը։ Եվ հարուստները, օգտվելով առիթից, նրանց վարձում էին չնչին գումարով, գարնանային ու ամառային աշխատանքների ժամանակ վճարելով օրական 10 կոպ.։ Մի շարք դեպքերում նրանք բատրակներին աշխատեցնում էին վաշխառուական տոկոսի դիմաց և ոչինչ չէին վճարում[67]։

Խոշոր արդյունաբերության բացակայության և ներքին շուկայի անբավարար զարգացման պատճառով աղքատացած գյուղացիների մի մասը ստիպված էր թողնել Արևելյան Հայաստանն ու աշխատանք որոնել Անդրկովկասի կամ Ռուսաստանի արդյունաբերական կենտրոններում։ 1869 թ. արտագնացության համար փաստաթուղթ էին վերցրել՝ Նոր Բայազետի գավառից 746, Էջմիածնի գավառից՝ 300, Նախիջևանի գավառից՝ 980, իսկ Երևանի գավառից՝ 423 մարդ[68]։ Շատերը գնում էին նաև առանց փաստաթղթի, որովհետև այն ստանալու համար որոշ գումար պետք է վճարեին։ Գյուղացիների հետ միասին արտագնացության էր դիմում նաև տնտեսապես քայքայված քաղաքային արհեստավորների մի մասը, ընդ որում համեմատաբար շատ էին

62 Նույն տեղում, էջ 87—88։
63 Նույն տեղում, էջ 84—85։
64 Նույն տեղում, էջ 84։
65 Տե՛ս «Сборник сведений о Кавказе», т. III, Тифлис, 1875, էջ 267—272։
66 Տե՛ս «Մշակ», 1872, № 35։
67 Տե՛ս И. Серебряков, նշվ. աշխ., էջ 87—88։
68 ЦГИА Армянской ССР, ф. 133, оп. 1, д. 991, թթ. 18, 27, 35, 45, 46։

գնում այն քաղաքներից, որտեղ արդյունաբերությունը ավելի հետամնաց էր։ Այսպես, 1863 թ. Երևանից մեկնել է 100, Նախիջևանից՝ 150, Օրդուբադից՝ 220, իսկ Նոր Բայազետից՝ 270 մարդ[69]։

Այսպիսով, Ռուսաստանին միացումից հետո Արևելյան Հայաստանի գյուղատնտեսությունը զարգացման իրական հնարավորություն է ստանում և, դուրս գալով տևական լճացումից, բռնում է առաջընթացի ուղին։ Նրա համարյա բոլոր ճյուղերը ավելի կամ պակաս չափերով ներքաշվում են շուկայական հարաբերությունների մեջ և ընդունում ապրանքային բնույթ։ Տեղի է ունենում աշխատանքի երկրագործական բաժանում. երկրի տարբեր շրջանները, իրենց բնակլիմայական պայմանների համեմատ, սկսում են մասնագիտանալ տարբեր արդյունքների արտադրության մեջ։ Սկիզբ է դրվում առևտրային հողագործության զարգացմանը։ Միաժամանակ Արևելյան Հայաստանը մասնակցում է համաանդրկովկասյան, մասամբ նաև համաշխարհային առևտրին, արտահանելով առավելապես հացահատիկ, անասնապահական մթերքներ, բամբակ և մետաքս։

Ապրանքադրամական հարաբերությունների աճը խորացնում է գյուղացիության ունեցվածքային շերտավորումը, որի հետևանքով XIX դարի կեսերին. հատկապես 50—60-ական թթ. արևելահայ գյուղում, ֆեոդալիզմի տիրապետության պայմաններում, սկսում են կազմավորվել կապիտալիստական հարաբերություններ։ Այդուհանդերձ, արևելահայ գյուղում ապրանքային արտադրությունը դեռ թույլ էր զարգացած, նրա առևտրական կապերը Անդրկովկասի արդյունաբերական շրջանների ու հատկապես Ռուսաստանի հետ տակավին անբավարար էին։ Ճիշտ է, ցարական իշխանությունները ձեռնարկեցին մի շարք միջոցառումներ, նպատակ ունենալով Անդրկովկասի ինչպես այլ շրջանների, այնպես էլ Արևելյան Հայաստանի տնտեսական հնարավորությունները ի սպաս դնել ռուսական կապիտալիզմի պահանջներին, բայց Ռուսաստանում ճորտատիրական իրավունքի տիրապետության և կապիտալիստական հարաբերությունների թույլ զարգացման պատճառով դրանք ցանկալի արդյունքներ չտվեցին։ 1890-ական թվականների վերջերին Վ. Ի. Լենինը գրում էր, որ Կովկասի «տնտեսական «նվաճումը» Ռուսաստանի կողմից շատ ավելի ուշ է կատարվել, քան քաղաքականը, իսկ տնտեսական այդ նվաճումը լիովին չի ավարտված մինչև այժմ էլ»[70]։

•

РАЗВИТИЕ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА ВОСТОЧНОЙ АРМЕНИИ В 1828—1860 гг.

Доктор историч. наук А. С. АМБАРЯН

(Резюме)

В период персидского господства сельское хозяйство Восточной Армении находилось в застое, а в ряде мест деградировало. Крестьяне подвергались жестокому национальному и социальному угнетению и не были заинтересованы в повышении производства земледельческих продуктов.

69 Տե՛ս «Кавказский календарь на 1866 г.», отд. III, էջ 69, 85, 91, 92։

70 Վ. Ի. Լենին, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 754։

Присоединение Восточной Армении к России было большим событием в жизни армянского народа. После этого смягчилась эксплуатация крестьянства; экономика страны, в особенности ее сельское хозяйство, начала развиваться; увеличивалось производство сельскохозяйственных продуктов, улучшалось их качество. Земледелие постепенно выходило из натурального состояния и принимало товарный характер. Развитие товарно-денежных отношений повлекло за собой разложение крестьянства и зарождение капиталистических отношений. Но в деревне все еще господствовали феодальные отношения.

В середине XIX в. царское правительство предприняло ряд мер с целью повысить экономические возможности Восточной Армении и поставить их на службу русскому капитализму, однако оно не добилось больших успехов, так как одновременно старалось сохранить и укрепить феодально-крепостнические отношения.